ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/34» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ(ԳՀ)
ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 11-ը հունիսի 2019թ.
Ժամը 11[00]

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝
ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության պետի տեղակալ Ա. Մուրադյան,
գնահատողներ՝
ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ԿԾԲ գլխավոր մասնագետ Ս. Սարգսյան,
ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ԿԾԲ առաջատար մասնագետ Վ. Ղազարյան
Հանձնաժողովի քարտուղար՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, Ա. Մաղաքյանը:

13.06.2019թ., ժամը 12:00-ին կայացած նիստում հանձնաժողովը շարունակեց աշխատանքները.

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/34» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Մաղաքյան)

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/34» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/34» ծածկագրով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Ա. Մաղաքյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար **«Ածուխի»** ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/34» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակիցների անվանում
1.	«ԱԼԻՈՆ» ՍՊԸ
2.	«ՎՄՎ ԳՐՈՒՊ» ՍՊԸ
3.	«ԴԱՌԵՍ» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2 .« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/34» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Ա. Մաղաքյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը **www.armeps.am** կայքի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են, ***բացառությամբ հետևյալ դեպքի.*** **«ՎՄՎ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի** կողմից էլեկտրոնային եղանակով ներկայացված հայտին որևէ փաստաթուղթ կցված չէր, ուստի հանձնաժողովը դրանք բեռնելու և գնահատելու հնարավորություն չուներ:

Ըստ ներկայացված տվյալների «ԱԼԻՈՆ» ՍՊԸ-ի հանդիսանում էր ՌԴ ռեզիդենտ: Ըստ հայտով ներկայացված գնային առաջարկի **(Հավելված N5)-ի մասանկիցը ԱԱՀ վճարող չէ,** իսկ համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ստացված գրության՝ ՀՀ ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցների մասնակցության դեպքում վերջիններիս կողմից ներկայացված գնային առաջարկը պետք է ներառի ավելացված արժեքի հարկ հարկատեսակը: Ընդ որում նշված հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը պետք է նշվի գնային առաջարկի ԱԱՀ սյունակում, իսկ գնային առաջարկի համեմատությունը պետք է իրականացվի առանց նշված հարկի գումարի հաշվարկման: Միաժամանակ մասնակցի կողմից հայտով ներկայացված որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությունը՝ **(Հավելված N3)-ը և** գնանշման հարցմանը մասնակցելու դիմումը՝ **(Հավելված N1)-ը չեն** համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին՝ նշված հավելվածներում առկա էին անհամապատասխանություններ, բայց քանի որ մասնակցի հայտը ենթակա էր մերժման (գնային առաջարկը ենթակա չէր շտկման), ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց վերը նշված հավելվածներում առկա անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ ծանուցում չուղարկել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Ա. Մաղաքյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

Հ/Հ	Գնան առարկայի անվանումը	Հ/մ	Քանակ	Նախահաշվային գին ՀՀ դրամ		Մասնակիցներ	Առանց ԱԱՀ	ԱԱՀ	ԱԱՀ-ով
1	Ածուխ	տոննա	600	54,000,000	1	«ԴԱՌԵՍ» ՍՊԸ	72,000,000	--	72,000,000

3.2 Մասնակցի գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը /հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում է /ճիշտ է/:

Ըստ ներկայացված տվյալների «ԴԱՌԵՍ» ՍՊԸ-ն վճարող չի:

3.3 Քանի որ «Ածուխի» ձեռքբերման նպատակով կազմակերպված **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/34» ծածկագրով ընթացակարգի արդյունքում** «Դառես» ՍՊԸ-ի կողմից առաջարկված գինը գերազանցում է տվյալ գնման համար պատվիրատուի պլանավորած նախահաշվային գինը, ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի և ընթացակարգի հրավերի 7.6 կետի 1-ին ենթակետի պահանջները, որոշել է գների նվազեցման նպատակով **19.06.2019թ. ժամը 12:00-ին** ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՔՁ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) կազմակերպել բանակցություններ:

19.06.2019թ. ժամը 12:00-ին կայացած նիստում հանձնաժողովն արձանագրեց, որ սահմանված ժամկետին կազմակերպված բանակցությանը մասնակիցը չներկայացավ և առաջարկված գինը թողնվեց առանց փոփոխության: Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «Դառես» ՍՊԸ-ի կողմից առաջարկված գինը գերազանցում է պատվիրատուի տվյալ գնումների համար նախատեսած ֆինանսական միջոցների չափը և իսկ բանակցությունների արդյունքում առաջարկված գինը չնվազեցվեց՝ ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել «Դառես» ՍՊԸ-ի հայտը:

3.4 Հանձնաժողովը որոշեց՝ ընթացակարգը հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին):

3.5 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/34» ծածկագրով ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը (կցվում է):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ) Ա. Մուրադյան

Գնահատող Ս. Սարգսյան

Գնահատող Վ. Ղազարյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Մաղաքյան